Azg armenian daily

30 ԱՊՐԻԼ 1998 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 74 (1577)

Ազգ

Արգենտինայի Մենաստը ճանաչեց հայոց ցեղասպանությունը

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ, 29 ԱՊՐԻԼ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Ապրիլի 23-ին, Հայոց ցեղասպանության 83-րդ տարեդարձի կապակցությամբ, Արգենտինայի Սենատը բանաձեւ է ընդունել՝ դատապարտելով բոլոր տեսակի ցեղասպանությունները ու զանգվածային ոչնչացումները: Միաժամանակ մտահոգություն է հայտնվել, որ նման ոճրագործությունները բավարար չափով չեն դատապարտվել:

Բանաձեւի նախաբանում վկայակոչվել է 1915 թ.-ի ապրիլի 24-ին սկսված Հայոց ցեղասպանությունը՝ այն «թուրքերի իրականացրած 20-րդ դարի առաջին ցեղասպանություն» որակելով: Բանաձեւը ընդունած սենատորները դիմել են երկրի նախագահին՝ վավերացնելու բանաձեւը հաջորդ օրը, երբ հայկական համայնքը տուրք է մատուցում անմեղ զոհերի հիշատակին՝ նպատակով արժանի հարգանք մատուցելով ցեղասպանության զոհերին:

Լանուս քաղաքի խորհուրդը իր հատուկ հայտարարության մեջ դատապարտել է թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացրած կոտորածը եւ համաձայն ՄԱԿ-ի 1948 կոնվենցիայի կատարվածը ցեղասպանություն է որակել: Հայտարարությունը թուրքերին մեղավոր է ճանաչել հայերի ոչնչացումը ծրագրելու մեջ:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Ալիեւի հետ գործնական, իսկ Շեւարդնաձեի հետ ջերմ հանդիպումներ Մոսկվայում

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ
ԲՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

ՀՀ նախագահ Բորիս Ելցինի հետ կրեմլյան հանդիպումից հետո երեքշաբթի օրվա հիմնական իրադարձությունը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի զրույցն էր Ադրբեջանական Հանրապետության նախագահ Հեյդար Ալիեւի հետ, որը տեղի ունեցավ երեկոյան «Պրեզիդենտ-հոթել» (նախկինում ԽՄԿԿ կենտկոմի «Օկտյաբրսկի») հյուրանոցի սրահներից մեկում եւ տեւեց մեկ ժամ 40 րոպե:

Մեր միջեւ տարածությունն ավելի մեծ է, քան Բաքվից Երեւան, կատակեց Ռոբերտ Քոչարյանը, ցույց տալով իրեն Ադրբեջանի նախագահից բաժանող բանակցությունների սեղանի կանաչ մահուդը:

Նախագահները միմյանց ներկայացրին իրենց ուղեկցող պատվիրակություններին: Ռ. Քոչարյանի կողքին էին ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Ալեքսան Հարությունյանը, նախագահի օգնական Արմեն Գեւորգյանը:

Նախ եւ առաջ ուզում եմ շնորհավորել Ձեզ ՀՀ նախագահի ընտրվելու կապակցությամբ, սկսեց զրույցը Հեյդար Ալիեւը: (Ի դեպ, ինչպես մեզ հաղորդեց ՀՀ նախագահի մամուլի ծառայության ղեկավար Հասմիկ Պետրոսյանը, հանդիպման նախածեռնողն ադրբեջանական կողմն էր): Հաջողություն մաղթելով Ռոբերտ Քոչարյանին, Հեյդար Ալիեւը հույս հայտնեց, որ Հայաստանի ու Ադրբեջանի համագործակցությունը կշարունակվի, հաստատես ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ: Եվ խաղաղ կարգավորման համար մենք կձգտենք հասնել ավելի մեծ փոխըմբռնման, ավելացրեց նա:

Շնորհակալություն հայտնելով շնորհավորանքի համար, Ռ. Քոչարյանը ցանկություն հայտնեց, որ կարգավորումը լինի հենց խաղաղ միջոցներով:

Տես էջ 3

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ազա՞տ, թե՞ պարտադիր ընտրություններ

Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Խորհրդարանական չորեքշաբթին վերապահված է ընտրական օրենսգրքի ճշնարկումներին: Այս չորեքշաբթին բավական առդյունավետ էր, որովհետեւ Վիգեն Խաչատրյանն ավարտեց իր նախագծի ներկայացումը, իսկ նրան ամբիոնի առջեւ փոխարինեց «Հայրենիք» պատգամավորական խմբի նախագահ Էդվարդ Եգոյանը: Նշենք, որ «Հայրենիք» պատգամավորական խմբի ՀՀ ընտրական օրենսգրքի տարբերակը միաժամանակ պաշտպանվում է նաեւ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից: Պրն Եգոյանի առաջարկած տարբերակը ժամանակին ծնվել է ընդդիմադիր կուսակցությունների մասնակցությամբ, ուստի այն կարելի է համարել քավշյա տարբերակներից մեկը, որը հաջողությամբ հիմք կդառնա «ՀՀ ընտրական օրենսգրքի» միացյալ նախագծի համար: «Հայրենիքն» առաջարկում է 50 մեծամասնական եւ 80 համամասնական պատգամավորական տեղ: Ընտրությունները կազմակերպելու են կենտրոնական, մարզային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովները, որոնց ձեւավորման սկզբունքը հետեւյալն է՝ առաջիկայում ԱԺ ընտրություններում առնվազն 5 տոկոս ձայներ հավաքած կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների հավասարաչափ մասնակցություն: Ըստ այդմ ԿԸՀ-ն կազմվելու է Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների 3-ական ներկայացուցիչներից, որոնց միանալու են նրանց թվին հավասար հասարակական կազմակերպությունների 1-ական ներկայացուցիչներ (այն հասարակական կազմակերպությունների, որոնց կանոնադրության մեջ ամրակայված է մարդու իրավունքների պաշտպանությունը): Նախագահական ընտրությունների պարագայում ԿԸՀ կազմը լրացվում է ԱԺ ընտրություններում առվազն 5 տոկոս ձայներ ստացած կուսակցությունների թվին, հավասար եւ նախագահի ընտրությանը մասնակցելու իրավունքի ստացած, բայց ԱԺ-ում ներկայացված կուսակցությունների կողմից չառաջադրված նախագահի թեկնածուների 1-ական ներկայացուցիչներով:

Իբրեւ հարակից զեկուցողներ հանդես եկան Պարույր Հայրիկյանը (ԻՄ) եւ Արշակ Սադոյանը (ԱԺՄ): Երկուսն էլ պաշտպանեցին նախագիծը՝ հիմնավորելով համամասնական ընտրակարգին նախապատվություն տալու դիրքորոշումը եւ հանձնաժողովներում կուսակցությունների հավասարակշռված ներկայությունը:

Մինչ պատգամավորները ճշնարկում էին օրենքի նրբիմաստները՝ ի մասնավորի ազգային փոքրամասնությունների խորհրդարանում վոնասներ հաստկացնելը, ընտրողների ցուցակների կազմության սկզբունքը, նիստերի դահլիճում սակավաթիվ, արդեն հարազատ դեմքեր էին, իսկ միջանցքում պատգամավորներից մեկը, որին հարցրինք ի՞նչ է մտածում զարգացումների մասին, պատասխանեց. «Մենք Սոլինգան չենք, որ մտածենք»:

Տես էջ 2

Ընկերարիա. Կայացավ հայ գոհարագործների եւ գոհարավաճառների հիմնադիր համագումարը

Շվեյցարիայի Բազել քաղաքում ապրիլի 26-ին կայացավ հայ գոհարագործների ու գոհարավաճառների հիմնադիր համագումարը, մասնակցությամբ 20 երկրներից ժամանած 100 արհեստավարժների: Համագումարը հրավիրվել էր, ինչպես տեղեկացնում է ժնեւում ՀՀ մշտական ներկայացուցչությունից մեր ստացած հաղորդագրությունը, Հայաստանի կառավարության կողմից, նպատակ ունենալով խթանել երկրի տնտեսության մեջ ներդրումները, ներգրավելով ամբողջ աշխարհում հայ գոհարագործների կարողականությունը:

ժնեւում ՄԱԿ-ի ՀՀ մշտական ներկայացուցիչ Կարեն Նազարյանի բացման խոսքից հետո, նորաստեղծ Հայկական զարգացման գործակալության (ADA) ղեկավար Գագիկ Եղիազարյանն ընթերցեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ուղերձը՝ համագումարի մասնակիցներին: Այնուհետեւ ՀՀ նախագահի կողմից ստորագրված պատվոգրեր եւ հատուկ մրցանակներ հանձնվեցին Հայկ Ասլանյանին, Վարդգես Քնաճյանին (երկուսն էլ՝ Բելգիայից) եւ Վահե Իշխարին (Կանադա), Հայաստանում ադամանդի հղկման եւ գոհարների արդյունահանման ասպարեզում նշանակալից ներդրումներ կատարելու համար:

Մասնակիցներին ներկայացվեց Հայաստանում իրենց հետաքրքրող ասպարեզում օրենսդրական եւ տնտեսական բարեփոխումների մասին լայն տեղեկատվություն, որին հաջորդեցին ներկա եւ աղագա ծրագրերի մասին հնարկումները:

Համագումարը որոշեց ստեղծել Հայ գոհարագործների ընկերություն (AJA), որի գործադիր կոմիտեն բաղկանալու է 13 մարդուց՝ Կանադայից, Ս. Նահանգներից, Լատինական Ամերիկայից, Եվրոպայից, Միջին Արեւելքից, Ավստրալիայից, Հայաստանից եւ ԱՊՀ մյուս երկրներից:

Բելգիայում Հայաստանի պատվավոր հյուպատոս Հայկ Ասլանյանը եւ ՀՀ ԱԺ անդամ, «Շողակն» գործարանի տնօրեն Գագիկ Աբրահամյանը ընտրվեցին ընկերակցության համապատասխանաբար, իսկ Վարդգես Քնաճյանը՝ փոխոտար: Գործադիր վարչությունը պատվո ատենապետի տիտղոս շնորհեց Գեւորգ (Ջանիկ) Օսկանյանին (Բելգիա):

Հայ գոհարագործների ընկերակցության 2-րդ համագումարը կկայանա 1999 թ. ապրիլին, դարձյալ Բազելում: Այնտեղ կընտրվի ընկերակցության ղեկավար լրիվ կազմը:

Վանո Սիրադեղյանը ժխտում է

Երեկ Ազգային ժողովում, պատասխանելով «Ազգի» հարցին, Վանո Սիրադեղյանն ասաց, որ Ուրարտ Զուրաբյանի մասնակցությամբ «Առագաստ» սրճարանում տեղի ունեցած հայտնի միջադեպին ինքը ներկա չի եղել, ինչպես պնդում են դեղձի որոշ ականատեսներ: Համաձայն այդ լուրերի՝ որն Սիրադեղյանը Սամսոն Ղազարյանի հետ գտնվել է սրճարանում եւ հետեւել հաշվարկումին: Սակայն Վանո Սիրադեղյանը հայտնեց, թե ինքը եղել է մերձակայքում՝ խոսել է «Նաիրի» կինոթատրոնի շրջակայքում: Ինչ վերաբերում է երկրորդ միջադեպին վերաբերող լուրերին, որը դարձյալ միջադեպի գիշերը նախածեռնել են ՀՀՇ անդամները Աղվան Վարդանյանի նկատմամբ, երբ վերջինս դասալքչական փորձաքննության էր ներկայացել, ըստ այդմ Ուրարտ Զուրաբյանի եւ Վահագն Հայոցյանի կողմնակիցները շրջապատել են դասալքչական փորձաքննության կենտրոնը՝ տպառնալիքներ տեղալով ոստիկանության եւ դատախազության հասցեին եւ միայն ուժերի անհավասարությունը տեսնելով՝ հեռացել են, ապա դրանք որն Սիրադեղյանն անհնար եւ մտացածին համարեց՝ անգամ իրենց իշխանության որոշ ՀՀՇ-ն ոստիկանության ներկայությամբ դատախազության հասցեին չէր կարող այդպիսի խոսքեր նախածեռնել:

Ն. Դ.

Քարու. Մեսրոպի պայթյունը՝ «հայերի հանձնարարությամբ»

ԲԱՔՈՒ, 29 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Ադրբեջանի Գերագույն դատարանն այսօր ցմահ բանտարկության է դատապարտել երկրի զինված ուժերի նախկին կոմիտասն 31-ամյա Ազեր Ասլանովին: 1994 թվականի հուլիսին նա ահաբեկչական գործողություն է կատարել Բաքվի մետրոյում, որի հետեւանքով զոհվել է 13 եւ վիրավորվել՝ 42 մարդ: Նա նաեւ մեղավոր է ճանաչվել Բաքվի գետնուղում հասցված նյութական վնասի համար, որը հավվում է գրեթե 7 միլիարդ մանաթ (1 միլիոն 750 հազար ԱՄՆ դոլար): Դատաքննության ընթացքում «հաստատվել է, որ ադրբեջանական բանակի նախկին զինծառայողը Բաքվի մետրոյում պայթյունն իրականացրել է հայկական հատուկ ծառայությունների հանձնարարությամբ, որոնք Ասլանովին հավաքագրել էին 1994 թվականի հունվարին նրա գերի ընկնելուց հետո»: Ասլանովի խոստովանությամբ, նրա վրա ֆիզիկական եւ բարոյական ճնշում է գործադրվել: Նա հայտարարել է, որ առաջադրանքը չկատարելու դեպքում սպառնացել են հաշվեհարդար տեսնել մոր հետ:

ՆՅՈՒԹԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Այրում բերած խողովակների դեպեկտիվը շարունակվում է

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Երեւան» տեղեկատվական կենտրոնը «Ազգի» ապրիլյան մի քանի համարներում ահազանգել էր, որ Հայաստանից իբրեւ մետաղի ջարդոն արտահանվում են մեծ քանակությամբ խողովակներ: Ըստ «Երեւանի» իրար հաջորդած օրերափով լուրերի, այրում կայարան են բերվել արդեն 60 24-մետրանոց եւ 17 12-մետրանոց խողովակներ, որոնք կտրատվում եւ որպես մետաղի ջարդոն դուրս են բերվում հանրապետությունից: Ընդ որում, «Երեւանի» առաջին տեղեկատվության համաձայն, այդ խողովակները «Հայգազարդինն» էին, որը, «Ազգ»-ում հերքվելուց հետո, պարզվեց Գ. Նարեկացու անվան մանկական հիմնադրամինը: Նույն աղբյուրի համաձայն, խողովակների տեղափոխումը հովանավորում է մի գնդապետ:



«Երեւանի» տեղեկատվությունները հաջորդեց «Ազգի»-ին ուղարկված Մանկական հիմնադրամի հերքում-նամակը, ըստ որի ոչ ոքի կողմից խողովակները որպես մետաղի ջարդոն վաճառելու եւ արտահանելու փորձ անգամ չի արվել: «Կարծում ենք, որ այս տվյալները (խոսքը վերոհիշյալ հերքումների մասին է-Գ. Մ.) պատասխանում են նշված հրապարակումներում բարձրացված հարցերին եւ խողովակների դեպեկտիվ դարձած պատմությունը կարելի է համարել ավարտված», նշված է նամակում, որին կից ուղարկված է նաեւ խողովակների առուվաճառի մասին մի փաստաթուղթ: Այդ փաստաթուղթը, ինչպես նաեւ խմբագրություն այցելած հիմնադրամի նախագահ Ս. Բարսեղյանի հետ զրույցն առաջացրեցին, որ խողովակների դեպեկտիվը, այնուամենայնիվ, շարունակվում է եւ «այդ խմորը դեռ շատ ջուր կվերցնի»:

Տես էջ 2

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ընթացիկ

Սկիզբը էջ 1

Այսուհանդերձ Սոիննոզաներ կային եւ, հանգի կասկածահարույցն ընտրական ցուցակների հարցն է, Պառույր Հայրիկյանը, առնեցուն ամերիկյան փորձով, առաջարկեց հետեւյալ նորարարությունը. ընտրություններից 40 օր առաջ հայտարարել, թե ովքեր ուզում են մասնակցել ընտրություններին, պետք է գան, գրանցվեն կենտրոնացված այրաններում եւ ստանան համարակալված թղթեր: Ընտրություններից 25 օր առաջ գրանցումն ավարտվում է չգրանցվեցիր, չես ընտրի: Անշուշտ, այս մոտեցմամբ ընտրական գեղծարարությունները կբացառվեն, բայց որքա՞ն կդահեկանվեն մարդու իրավունքները: Էդվարդ Եգորյանը մասնաճյուղեց այս սկզբունքի խոցելի կողմերը. «Դա կլինի ոչ թե ընտրողների, այլ ընտրելու ցանկություն ունեցողների ցուցակ»:

Որոշ պատգամավորների անհանգստացնում էր ընտրացրավի խնդիրը. 1000 դոլարից «Հայրենիք» պատգամավորական խումբը ընտրացրավի չափն իջեցրել է 500-ի, սակայն Վազգեն Սաֆարյանը վկայաբերեց Հին Հունաստանի փիլիսոփաներին, որոնք ընդում էին. «Ընտրություններում հաղթում են հարուստները եւ ոչ թե խելոները»: Էդվարդ Եգորյանը նման «արդանային դեմոկրատիային» դեմ էր. «Քաղաքականությունը բիզնես չէ», բայց գումարը եւս զսպաշարիկ է առաջադրվելու մուլուցի կամ հեսին նպատակներ ունեցողների համար ընտրացրավ սահմանել կամ ստորագրությունների թանակն ավելացնել:

Վերջին 15 րոպեին

Եթե կառավարությունում քափուր է մշակույթի նախարարի պաշտոնը, ապա Ազգային ժողովում գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի աթոռը: Վերջին 15 րոպեն նախագահող Յուրի Բախշյանը հատկացրեց թեկնածուների առաջադրմանը: Առաջինը Սերուժան Տեր-Գուլանյանն էր առաջարկելով «ընտրել կին կամ աղջիկ» նախագահ. ավելի ստույգ Գայանե Սարուխանյանին, առաջարկն ուղեկցվեց ջենթլմենական կամք ցուցաբերելու հորդորով: Վարդան Խաչատրյանը չժխտեց, որ ինքը ջենթլմեն է, բայց առաջադրեց իր կուսակից ընկերոջը Արամ Մկրտչյանին (ՔՊՄ):

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ազա՞տ, թե՞ պարտադիր ընտրություններ

Ընտրություններից 25 օր առաջ գրանցումն ավարտվում է չգրանցվեցիր, չես ընտրի: Անշուշտ, այս մոտեցմամբ ընտրական գեղծարարությունները կբացառվեն, բայց որքա՞ն կդահեկանվեն մարդու իրավունքները: Էդվարդ Եգորյանը մասնաճյուղեց այս սկզբունքի խոցելի կողմերը. «Դա կլինի ոչ թե ընտրողների, այլ ընտրելու ցանկություն ունեցողների ցուցակ»:

Որոշ պատգամավորների անհանգստացնում էր ընտրացրավի խնդիրը. 1000 դոլարից «Հայրենիք» պատգամավորական խումբը ընտրացրավի չափն իջեցրել է 500-ի, սակայն Վազգեն Սաֆարյանը վկայաբերեց Հին Հունաստանի փիլիսոփաներին, որոնք ընդում էին. «Ընտրություններում հաղթում են հարուստները եւ ոչ թե խելոները»: Էդվարդ Եգորյանը նման «արդանային դեմոկրատիային» դեմ էր. «Քաղաքականությունը բիզնես չէ», բայց գումարը եւս զսպաշարիկ է առաջադրվելու մուլուցի կամ հեսին նպատակներ ունեցողների համար ընտրացրավ սահմանել կամ ստորագրությունների թանակն ավելացնել:

Վերջին 15 րոպեին

Եթե կառավարությունում քափուր է մշակույթի նախարարի պաշտոնը, ապա Ազգային ժողովում գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի աթոռը: Վերջին 15 րոպեն նախագահող Յուրի Բախշյանը հատկացրեց թեկնածուների առաջադրմանը: Առաջինը Սերուժան Տեր-Գուլանյանն էր առաջարկելով «ընտրել կին կամ աղջիկ» նախագահ. ավելի ստույգ Գայանե Սարուխանյանին, առաջարկն ուղեկցվեց ջենթլմենական կամք ցուցաբերելու հորդորով: Վարդան Խաչատրյանը չժխտեց, որ ինքը ջենթլմեն է, բայց առաջադրեց իր կուսակից ընկերոջը Արամ Մկրտչյանին (ՔՊՄ):

Արհեստավարժների հանդիպումը

Վարչապետ Արմեն Դարբինյանը Ռոբերտ Քոչարյանի հետ Մոսկվայում է, եւ խորհրդարանում 13 պատգամավորների հետաքրքրությունը փորձեցին բավարարել նրա թիմակից երիտասարդ նախարարները: Օրն ակնհայտ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանինն էր, որը չորս անգամ մոտեցավ ամբիոնին պատասխանելու գիտական եւ կրթական ոլորտին վերաբերող հարցերին: Ելույթ սակայն. միակն է ընդունել կրթության մասին օրենք. որը կկանոնակարգի եւ վճարովի անվճար ուսուցման հիմունքները, եւ հանրակացարանների պատկանելությունը:

Կրթական ոլորտից հետո պատգամավորներին առավելագույնս հետաքրքրում էր սոցիալ-մշտեսականը հաղթական շեշտադրումներով: Պատգամավոր Արթուր Բաղդասարյանը երեկ ոչ հոետորական հարցեր ուղղեց կառավարությանը, որոնց պատասխանեց կառուցվածքային եւ մշտեսական բարեփոխումների նախարար Վահրամ Ավանեսյանը: Այսպիսով. ա) հնարավո՞ր է էլեկտրաէներգիայի սակագների նվազեցում, եթե այո, ապա ե՞րբ. բ) ջրի սակագնի եւ ջրամատակարարման հետ կապված խնդրի հանգուցալուծում, երբ մարդիկ ջուր չեն ստանում, բայց ստիպված են մուծել դրա համար. գ) ինչո՞ւ պետք է տարբեր համայնքներում բնակվարձի կամ սպասարկման վճարների տարբեր չափեր սահմանվեն, գործինակ Շահումյանում 12 դրամ էմ, Շենգավիթում 20 դրամ: Վահրամ Ավանեսյանը միանշանակ էր էներգետիկայի, ջրամատակարարման եւ կոմունալ ծառայությունների ոլորտում համալիր բայլեր են պետք ներդրումային քաղաքականություն: Կլինեն ներդրումներ, կլուծվեն խնդիրները: Իբրեւ նոր քաղաքականության ավետաբեր ծիծեռնակ պատգամավոր Գագիկ Թադեւոսյանը բոլորին շնորհավորեց «Գյումուշ» ՀԷԿ-ի 4-րդ ագրեգատի շահագործման առիթով:

Միով բանիվ, կառավարություն-խորհրդարան հարաբերությունները բավական բարյացակամ էին, ինչը վկայում է, որ կառավարության ծրագիրը անխոչընդոտ կիրառվի: Անգամ ընդդիմադիր «Հայրենիքից» Սոս Գիմիշյանը շնորհավորելով նախարարներին կրկնակի շնորհավորեց ՆԳ եւ ԱԱ նախարար Սերժ Սարգսյանին, որը խախտեց «ավանդույթը»: Մինչ այդ ում հարց էր տվել որեւ Գիմիշյանը. նրան պատասխանակ էին արել. Նոր ժամանակներ են, նոր ավանդույթներ:

Շուտեւաբթին ավարտվեց արտահերթ նիստի գումարման իվերակության. որի օրակարգից հանվեց ընտրական օրենսգիրը: Վազգեն Հարոյանի շահագրգիռ աչքից չվրիպեց Ազգ կանոնակարգի այն կետը. որի համաձայն արտահերթ նիստը կարող է ավարտվել սրայն օրակարգի սպառումից հետո. իսկ ընտրական օրենսգիրն առայժմ անսպառ է. որեմն էլ ըմբոստանա ՀՅԴ միակ պատգամավոր Ռուբեն Հակոբյանը:

ՎԱՐՉԱԿԱՆ

Մինչեւ մայիսի 10-ը մարզպետները կնշանակվեն

Տարածային ինքնակառավարման նախարար Դավիթ Ջաղոյանը «Ազգին» տեղեկացրեց, որ մինչեւ մայիսի 10-ը բոլոր 10 մարզպետները կնշանակվեն: Նորանշանակ մարզպետների կազմը բավական փոփոխված կլինի, սակայն «բոլոր նրանք, ովքեր աշխատող են եւ կկարողանան լուծել նորովի դրվող խնդիրները, կմնան», ասաց Դավիթ Ջաղոյանը: Ինչ վերաբերում է Երեւանի նոր քաղաքապետին, ապա ըստ Սահմանադրության, քաղաքապետին նշանակելու է ՀՀ նախագահը, եւ Դավիթ Ջաղոյանը նշեց, որ չի կարող որեւէ տեղեկություն տալ, չի խորհրդակցել Ռոբերտ Քոչարյանի հետ: Այն կասկածին, թե կառավարությունում նախարարական պաշտոն չստանալուց հետո կուսակցական ու քաղաքական ուժերը կհավակնեն միջին օղակներում՝ պաշտոն ստանալու, տվյալ դեպքում՝ մարզպետության, տարածային կառավարման նախարարը պատասխանեց. «Եթե այդ կուսակցական ուժերն արհեստավարժ են, ապա՝ այո, պաշտոն կստանան»: Շնորհանալով ավելացնել, որ եթե «Երկրապահը» համարենք իշխանական նույնպիսի մեծամասնություն, ինչ ՀՀՇ-ն, ապա «Երկրապահը» գործադիր իշխանության մարմիններում մեծամասնություն չի լինի, ինչպես ՀՀՇ-ն իր իշխանության օրոք:

Բացի նոր թեկնածուների որոնումից՝ նախարարը հետամուտ է մշակելու տարածային կառավարման նոր հայեցակարգ, ուր կհստակեցվեն տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքների լիազորությունները, նրանց իրավասություններն ավելի կընդլայնվեն, իսկ մարզպետներին հնարավորինս կտրվեն վերահսկելու եւ համակարգելու գործառույթներ: Մեր այն հարցին, թե ժամանակը չէ՞ Սահմանադրությամբ փոփոխել մարզպետների եւ Երեւանի քաղաքապետի նշանակման կարգը՝ դարձնելով դրանք ընտրովի պաշտոններ, Դավիթ Ջաղոյանն ասաց. «Պատրաստ չեմ պատասխանելու հարցին, որովհետեւ հայեցակարգին դեռ ամբողջությամբ ծանոթ չեմ»:

Վերահսկողության առաջավոր ձեւ՝ հարկային եւ մաքսային մարմինների հանդեպ

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Էդվարդ Սանդոյանն ի պատասխան «Ազգի» այն հարցի, թե կառավարության անցած նիստում հնչած վարչապետի ճննադատությունից հետո հարկային եւ մաքսային եկամուտների հավաքագրման ընթացքն ի՞նչ փոփոխություններ է կրում, պատասխանեց. «Վերջին օրերի ընթացքում ֆիսկալ, մասնավորապես հարկային մուտքերի լուրջ աճ է նկատվում: Մենք մշակել ենք հարկային եւ մաքսային վարչարարությունը վերահսկելու շատ հետաքրքիր մեխանիզմ, որը վարչարարությունը մի մակարդակ կբարձրացնի, եւ 1998 թ. հարկային եւ մաքսային մուտքերի տեսանկյունից կլինի ավելի կազմակերպված եւ կառավարելի: Մենք վերահսկողության նոր՝ առաջավոր ձեւեր ենք կիրառելու, եւ կանխատեսելիության աստիճանը բարձրացնելով՝ բյուջեի ծրագրված եւ փաստացի մուտքերի ամենաբարձր մոնիտորինգ կունենանք»: Ինչ վերաբերում է կադրային փոփոխություններին, ապա ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում այդպիսիք չեն սպասվում. «Մեր թիմը կայուն է, ձեւավորված», ամփոփեց Էդվարդ Սանդոյանը:

ՏԱՍՏԱՈՍ

Կրկնակի վիրահատությունից հետո Վահան Հովհաննիսյանի առողջական վիճակը բավարար է

ԵՐԵՎԱՆ, 29 ԱՊՐԻԼ, ԱՐՍԵՆՊՐԵՍ: Ապրիլի 28-ին Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտում կրկնակի վիրահատության (լեղաքարկ եւ ծնոտ) է ենթարկվել մեկ օր առաջ նախագահի խորհրդական նշանակված ՀՅԴ գերագույն մարմնի ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանը: Նա սովորական հիվանդասենյակում է գտնվում: Բժիշկների գնահատմամբ, առողջական վիճակը բավարար է: Հիվանդանոցից դուրս կգրվի հավանաբար հաջորդ շաբաթվա սկզբին:

Մայիսի 5-ին կբացվի Ցյուրիխ-Երեւան օդային չվերթը

ԵՐԵՎԱՆ, 28 ԱՊՐԻԼ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 5-ից շվեյցարական Swissair ավիաընկերությունը սկսում է նոր անվայրէջ Ցյուրիխ-Երեւան եւ Երեւան-Ցյուրիխ չվերթի իրականացումը: Ինչպես հայտնել է Swissair ընկերության երեւանյան գրասենյակը, չվերթները կկայանան շաբաթը երկու անգամ. ինքնաթիռը Երեւան կժամանի երեքշաբթի եւ ուրբաթ ժամը 4-ին եւ Երեւանից կմեկնի ժամը 4-55-ին: Մայիսի 5-ին նախատեսվում է հանդիսավոր կերպով նշել չվերթի բացումը. ժամը 4-ին «Զվարթնոց» օդանավակայանում եւ ժամը 16-ին Swissair-ի գրասենյակում:

Այրում բերած խողովակների դեպեկտիվը շարունակվում է

Սկիզբը էջ 1

Պարզվում է, որ մանկական Ֆոնդը այս տարվա հունվարի 13-ին որոշես պատվիրատու Գեղարդունիի մարզպետարանի հետ կնքել է մի պայմանագիր, ըստ որի մարզպետարանն իր հաշվեկշռում եղած Ակուլիս-Սեւան ջրատարի անավարտ շինարարությունից մնացած խողովակները (մոտ 800 տոննա), պարտավորվել է վաճառել հիմնադրամին:

«Ունի՞ արդյոք մանկական հիմնադրամը որոշես հասարակական կազմակերպություն առուվաճառով եւ կոմերցիոն գործունեությամբ զբաղվելու իրավունքի» հարցին հիմնադրամի նախագահի պատասխանը հետեւյալն էր. «Այսօրվա վիճակով հիմնադրամի կանոնադրությունը թույլ չի տալիս գնել եւ վաճառել, դրա համար կա դուստր-ձեռնարկություն հասկացությունը»: Այդ նպատակով էլ, ըստ Ս. Բարսեղյանի, 15-20 օր առաջ հիմնվել է «Արմուսար» կոմերցիան որոշես հիմնադրամի դուստր-ձեռնարկություն, որին էլ, ապրիլի 17-ին Գեղարդունիի մարզպետարանին ուղարկված գրության համաձայնասխան, տվել է պատվիրատու կողմի իրավունքը: «Դա չի՞ նշանակում, որ դեռեւս հունվարին կնքված պայմանագիրն անօրինական է» հարցին հիմնադրամի նախագահի երկար պատասխանը կարելի է մի նախադասությամբ ձեւակերպել այսպես՝ կարելի է կամ ընտրացրավ սահմանել կամ ստորագրությունների թանակն ավելացնել:

Վերջին 15 րոպեին

Եթե կառավարությունում քափուր է մշակույթի նախարարի պաշտոնը, ապա Ազգային ժողովում գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի աթոռը: Վերջին 15 րոպեն նախագահող Յուրի Բախշյանը հատկացրեց թեկնածուների առաջադրմանը: Առաջինը Սերուժան Տեր-Գուլանյանն էր առաջարկելով «ընտրել կին կամ աղջիկ» նախագահ. ավելի ստույգ Գայանե Սարուխանյանին, առաջարկն ուղեկցվեց ջենթլմենական կամք ցուցաբերելու հորդորով: Վարդան Խաչատրյանը չժխտեց, որ ինքը ջենթլմեն է, բայց առաջադրեց իր կուսակից ընկերոջը Արամ Մկրտչյանին (ՔՊՄ):

Արհեստավարժների հանդիպումը

Վարչապետ Արմեն Դարբինյանը Ռոբերտ Քոչարյանի հետ Մոսկվայում է, եւ խորհրդարանում 13 պատգամավորների հետաքրքրությունը փորձեցին բավարարել նրա թիմակից երիտասարդ նախարարները: Օրն ակնհայտ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանինն էր, որը չորս անգամ մոտեցավ ամբիոնին պատասխանելու գիտական եւ կրթական ոլորտին վերաբերող հարցերին: Ելույթ սակայն. միակն է ընդունել կրթության մասին օրենք. որը կկանոնակարգի եւ վճարովի անվճար ուսուցման հիմունքները, եւ հանրակացարանների պատկանելությունը:

Կրթական ոլորտից հետո պատգամավորներին առավելագույնս հետաքրքրում էր սոցիալ-մշտեսականը հաղթական շեշտադրումներով: Պատգամավոր Արթուր Բաղդասարյանը երեկ ոչ հոետորական հարցեր ուղղեց կառավարությանը, որոնց պատասխանեց կառուցվածքային եւ մշտեսական բարեփոխումների նախարար Վահրամ Ավանեսյանը: Այսպիսով. ա) հնարավո՞ր է էլեկտրաէներգիայի սակագների նվազեցում, եթե այո, ապա ե՞րբ. բ) ջրի սակագնի եւ ջրամատակարարման հետ կապված խնդրի հանգուցալուծում, երբ մարդիկ ջուր չեն ստանում, բայց ստիպված են մուծել դրա համար. գ) ինչո՞ւ պետք է տարբեր համայնքներում բնակվարձի կամ սպասարկման վճարների տարբեր չափեր սահմանվեն, գործինակ Շահումյանում 12 դրամ էմ, Շենգավիթում 20 դրամ: Վահրամ Ավանեսյանը միանշանակ էր էներգետիկայի, ջրամատակարարման եւ կոմունալ ծառայությունների ոլորտում համալիր բայլեր են պետք ներդրումային քաղաքականություն: Կլինեն ներդրումներ, կլուծվեն խնդիրները: Իբրեւ նոր քաղաքականության ավետաբեր ծիծեռնակ պատգամավոր Գագիկ Թադեւոսյանը բոլորին շնորհավորեց «Գյումուշ» ՀԷԿ-ի 4-րդ ագրեգատի շահագործման առիթով:

Միով բանիվ, կառավարություն-խորհրդարան հարաբերությունները բավական բարյացակամ էին, ինչը վկայում է, որ կառավարության ծրագիրը անխոչընդոտ կիրառվի: Անգամ ընդդիմադիր «Հայրենիքից» Սոս Գիմիշյանը շնորհավորելով նախարարներին կրկնակի շնորհավորեց ՆԳ եւ ԱԱ նախարար Սերժ Սարգսյանին, որը խախտեց «ավանդույթը»: Մինչ այդ ում հարց էր տվել որեւ Գիմիշյանը. նրան պատասխանակ էին արել. Նոր ժամանակներ են, նոր ավանդույթներ:

Շուտեւաբթին ավարտվեց արտահերթ նիստի գումարման իվերակության. որի օրակարգից հանվեց ընտրական օրենսգիրը: Վազգեն Հարոյանի շահագրգիռ աչքից չվրիպեց Ազգ կանոնակարգի այն կետը. որի համաձայն արտահերթ նիստը կարող է ավարտվել սրայն օրակարգի սպառումից հետո. իսկ ընտրական օրենսգիրն առայժմ անսպառ է. որեմն էլ ըմբոստանա ՀՅԴ միակ պատգամավոր Ռուբեն Հակոբյանը:

Ամերիկայի Կարմիր խաչի հովանավորությամբ

ԱՄՆ Կարմիր խաչի կողմից աղետի գոտում կիրականացվի բնակարանային շինարարության ծրագիր, որը կընդգրկի նաեւ Վանաձոր քաղաքը: Տարոն 4 քաղամասում երկրաշարժից տուժած ընտանիքների համար բնակելի շենքեր կկառուցվեն: Ծրագրի մանրամասները ճշտելու նպատակով ամերիկյան Կարմիր խաչի ներկայացուցիչները հանդիպեցին Լոռու մարզպետ Ս. Այվազյանին: Կարեւորելով ամերիկյան կողմի նախաձեռնությունը, մարզպետը հավաստիացրեց, որ տեղական իշխանությունների կողմից կարվի ամեն ինչ ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար:

Ա. ՄԵՍՈՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարվածք
«Ազգ» թերթի
Տղոմը «Ազգին» պատկանիր է
Նիւթերը չեն գրախօսում ու չեն
վերադարձում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՀՈՒՅԶ

Սկիզբը էջ 1

Կա մեծ ներուժ. հնարավորություններ. եւ պետք է հանել բոլոր խոչընդոտներն այդ կարգավորման ճանապարհին. հայտարարեց ՀՀ նախագահը. Ռ. Քոչարյանն. իր խոսքերով. պատրաստ է համագործակցության. բայց եւ կանոնավոր խոսակցության համար: Կարծում եմ. ասաց նա. որ բարի կամքի եւ հանդիպակաց հայերի դեպքում մենք կարող ենք արդյունքների հասնել:

Հ. Ալիեւը հիշեցրեց. որ մայիսի 12-ին լրանում է 4 տարին այն օրվանից. երբ հրադադարի համաձայնագիր կնքվեց ղարաբաղյան հակամարտության գոտում:

Այնուհետեւ զույցը շարունակվեց առանց լրագրողների: Ավարտին կողմերը հրաղարակեցին հետեւյալ համատեղ հայտարարությունը. «Ադրբեջանական Հանրապետությունն ու Հայաստանի Հանրապետությունը հաստատում են իրենց հավատարմությունը լեռնայինղարաբաղյան զինված հակամարտության խաղաղ կարգավորմանը բացառապես միջոցներով. ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում բանակցությունները շարունակելով. եւ պատրաստակամություն են հայտնում հետայսու անշեղորեն ջանալ 1994 թ. մայիսին հաստատված կրակի դադարեցման ռեժիմը:

Ադրբեջանական Հանրապետությունն ու Հայաստանի Հանրապետությունը պատրաստակամություն են հայտնում աջակցել հակամարտության կարգավորման գործում իրական տեղաշարժերի ձեռքբերմանն ուղղված Մինսկի համաժողովի համանախագահների եւ նրանց ներկայացուցիչների գործունեությանը»:

Հանդիպման ավարտին հանդես գալով լրագրողների առջեւ Ռ. Քոչարյանն առաջարկեց հայտարարության տեքստից հանել «զինված» բառը. երբ խոսքը գնում է հակամարտության մասին: Մենք ձգտում ենք կարգավորել ոչ միայն ռազմական հակամարտությունը. այլեւ հակամարտությունն ընդհանրապես. նշեց ՀՀ նախագահը:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Ալիեւի հետ գործնական...

ձայնագիր կնքվեց ղարաբաղյան հակամարտության գոտում:

Այնուհետեւ զույցը շարունակվեց առանց լրագրողների: Ավարտին կողմերը հրաղարակեցին հետեւյալ համատեղ հայտարարությունը. «Ադրբեջանական Հանրապետությունն ու Հայաստանի Հանրապետությունը հաստատում են իրենց հավատարմությունը լեռնայինղարաբաղյան զինված հակամարտության խաղաղ կարգավորմանը բացառապես միջոցներով. ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում բանակցությունները շարունակելով. եւ պատրաստակամություն են հայտնում հետայսու անշեղորեն պահպանել 1994 թ. մայիսին հաստատված կրակի դադարեցման ռեժիմը:

Ադրբեջանական Հանրապետությունն ու Հայաստանի Հանրապետությունը պատրաստակամություն են հայտնում աջակցել հակամարտության կարգավորման գործում իրական տեղաշարժերի ձեռքբերմանն ուղղված Մինսկի համաժողովի համանախագահների եւ նրանց ներկայացուցիչների գործունեությանը»:

Հանդիպման ավարտին հանդես գալով լրագրողների առջեւ Ռ. Քոչարյանն առաջարկեց հայտարարության տեքստից հանել «զինված» բառը. երբ խոսքը գնում է հակամարտության մասին: Մենք ձգտում ենք կարգավորել ոչ միայն ռազմական հակամարտությունը. այլեւ հակամարտությունն ընդհանրապես. նշեց ՀՀ նախագահը:

Հ. Ալիեւը հիշեցրեց. որ մայիսի 12-ին լրանում է 4 տարին այն օրվանից. երբ հրադադարի համաձայնագիր կնքվեց ղարաբաղյան հակամարտության գոտում:

Հ. Ալիեւը պատասխանեց. «Երբ պետք լինի»: «Կդայմանավորվենք». ավելի քառեհաճ էր Ռ. Քոչարյանը:

Ավելի ուշ ՀՀ նախագահն ուղեկտրվեց Մալի Ռժեւսկի նրբանցք. Վրաստանի Հանրապետության դեսպանատուն. որ տեղի ունեցավ նրա անդրանիկ հանդիպումը նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հետ:

Սա մեր առաջին հանդիպումն էր Ռ. Քոչարյանի նախագահ ընտրվելուց հետո. զույցից հետո փաստեց Էդ. Շեւարդնաձեն:

Ինչի՞ մասին էիք խոսում մեր այս հարցին Վրաստանի ղեկավարը պատասխանեց. «Մեր հանդիպումն անցավ զարմանալիորեն լավ. մեծ շահագրգռվածությամբ մեր երքայր ժողովուրդների հարաբերությունները զարգացնելու. ինչպես նաեւ Վրաստանի համար կարեւորագույն այդ հարցում աջակցություն ցուցաբերելու»:

Ռ. Քոչարյանի կարծիքով. ամենակարեւորը զույցի անկեղծությունն է: Այս դեպքում չեն լինում հարցեր. որոնց շուրջ ընդունվեն սխալ որոշումներ. ասաց ՀՀ նախագահը: Համագործակցությունը. շփումները կշարունակվեն. համոզված է նա: Կան խնդիրների մեծ թիվ. տնտեսական համագործակցության չօգտագործված. չիրականացված հնարավորություններ: Կա խնդիրների մի կույտ. որ պետք է միասին լուծենք. կան տարածաշրջանային հիմնահարցեր. որոնք առանձին շատ մեծ խոսակցության թեմա են. ընդգծեց Ռ. Քոչարյանը:

Նոյեմբերի օրը ՀՀ նախագահը մասնակցեց ԱՊՀ գագաթաժողովին. հանդիպեց Ռուսաստանի վարչապետ Վ. Չեռնոմիրդինի հետ. որի ընթացքում քննարկվեցին հարցեր. որոնք վերաբերում են ՌԴ-ի եւ Հայաստանի միջեւ ռազմավարական գործընկերության զարգացմանը:

Ազատություն վինսենք Քոչեքելին, պահանջում են ՄՄԿ-ի աշխատողները

90 օր է անցել ՌԴ Վլադիկավկազ քաղաքում անհայտ հանգամանքներում. անհայտ անձանց կողմից եւ անհայտ շարժառիթներով առեւանգված ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի (ՓԳՀ) գրասենյակի ներկայացուցիչ. Ֆրանսիացի Վինսենք Քոչեքելի անհետացումից: Այդ կապակցությամբ ՄԱԿ-ի կենտրոնակայանում (Ժնեւ) եւ աշխարհի բոլոր ներկայացուցչություններում երեկ լուռ համերաշխության ցույց տեղի ունեցավ Քոչեքելին ազատ արձակելու պահանջով. մարդասիրական կազույցներում ընդգրկված աշխատակիցների անվտանգության առաիովմանը նպաստելու եւ միջազգային հանրության ուշադրությունը նրանց նկատմամբ կիրառվող բռնարարքների վրա հրավիրելու նպատակով: Ժնեւում. մասնավորապես. կազմակերպվեց լռության երթ ՄԱԿ-ի ՓԳՀ շենից դեպի Ազգությունների պալատ. հանրահավաքում մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցվեց զոհվածների հիշատակին:

ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատար Սադակո Օգաթայի աշխարհի բոլոր կառավարություններին եւ կազմակերպություններին ուղղված կոչում ասվում է. որ 1992 թ.-ին ՄԱԿ-ի 140 աշխատակիցներ են սպանվել. 25-ը առեւանգվել աշխարհի տարբեր երկրներում. 50 աշխատակիցներ գերության մեջ են կամ անհայտ կորած: 1997-ին միայն Տաջիկստանում առեւանգվել են ՄԱԿ-ի ՓԳՀ 5 աշխատակիցներ (որոնցից մեկն սպանվել է). 12 դիտորդներ. մարդասիրական աշխատողներ եւ լրագրողներ. որոնք հետագայում ազատ են արձակվել: 1994–97 թթ. Աֆրիկայի Մեծ լճերի տարածքում սպանվել են ՓԳՀ գործունեությանը մասնակցող 33 տեղացիներ. 3 հոգի անհայտ կորել են: Նախկին Հարավսլավիայում հակամարտության ընթացքում սպանվել են 8 աշխատակիցներ. Սարաեւո սննդամթերք տեղափոխվող 4 հոգուց բաղկացած ինքնաթիռ ռմբակոծվել է:

Քոչեքելը Հյուսիսային Կովկասում աշխատում է 1996 թ.-ից. մինչ այդ ծառայել է Թուրքիայի. Ֆրանսիայի եւ Ժնեւի գրասենյակներում. Սլովակիայի Հանրապետությունում. Եվրախորհրդում. առաջատար տիեզոսներ ունի միջազգային իրավունքի բնագավառներում:

Երեւանյան համերաշխության ցույցի մասնակիցների ծեռքերին դեղին ծաղիկներ էին. որ եվրոպայում հավատի խորհրդանիշ են. սուղ տեղեկությունների համաձայն. Քոչեքելը դեռեւս կենդանի է. թեպետ գտնվելու վայրի եւ վիճակի վերաբերյալ մանրամասներ հայտնի չեն: Ցույցի մասնակիցներին (ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի. ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակների. Միջազգային կարմիր խաչի. Նորվեգական փախստականների կոմիտեի. Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության հայաստանյան կենտրոնի ներկայացուցիչներ) ողջունեց. «ՄԱԿ-ի ընտանիքի անդամին» սեփական ընտանիք վերադարձնելուն նպաստելու համար շնորհակալություն հայտնեց ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի համակարգող Կաթիցա Յեկալովիչը. իսկ ՓԳՀ գրասենյակի ներկայացուցիչ Թոմաս Բիրքը փաստեց. որ Հայաստանում միջազգային կազմակերպությունների աշխատակիցների նկատմամբ վերբերմունքն օրինակելի է:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՊՀ անդամ 8 պետություն, որոնց թվում եւ Հայաստանը, ստորագրեցին Աբխազիային խաղաղության հարկադրող փաստաթուղթ

ՄՈՍԿՎԱ. 29 ԱՊՐԻԼ. ՆԻՅԱՆ. ՏԱՍՊՆ. Ապրիլի 29-ին Մոսկվայում. ԱՊՀ անդամ պետությունների ներկայացուցչական մակարդակով ստորագրվեց մի փաստաթուղթ. որով նախատեսվում է ճնշում գործադրել իշխանահռչակ Աբխազական Հանրապետության վրա: Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը. փաստաթուղթը ստորագրել են ԱՊՀ անդամ 8 պետություններ. այդ թվում եւ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: Փաստաթղթի տակ իրենց ստորագրությունը չեն դրել Բելառուսը. Մոլդովան եւ Թուրքմենստանը: Գագաթաժողովից հետո տեղի ունեցած ճեղազրույցում Վրաստանի նախագահ է. Շեւարդնաձեն հատուկ

Փաստաթուղթը. համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխի դրույթների. նախատեսում է խաղաղարար գործողություններն ստիճանաբար վերածել Աբխազիային խաղաղության հարկադրելու գործողության. եթե Աբխազիան ընդդիմանա փախստականների վերադարձին: Փաստաթուղթը Աբխազիայի դեմ պատժամիջոցների վերացումը կապում է վրացի փախստականների վերադարձի հետ. թեկուզ եւ առաջին փուլում Գալիի շրջան. որտեղ մինչ պատերազմը բնակչության գրեթե 100 տոկոսը վրացիներ էին: Վրաստանի համար կարեւորագույն այդ հարցում աջակցություն

Երեք ամսից կդիտենք ֆրանսիական հեռուստահաղորդումներ

ԵՐԵՎԱՆ. 29 ԱՊՐԻԼ. ԱՐՄԵՆՊՐԵՍ. Հայաստանի ազգային հեռուստաընկերության տնօրեն Համլետ Գասպարյանը եւ Ֆրանսիական միջազգային ալիք (CFI) հեռուստաընկերության կենտրոնական եւ Արեւելյան եվրոպայի երկրների գծով պատասխանատու Մարի-Լոր Բիրիեն ստորագրեցին պայմանագիր. ըստ որի Հայաստանի ազգային հեռուստատեսությունը կկարողանա ստանալ եւ բարգմանաբար հեռուստադիտողին հրամցնել CFI-ի հեռուստածրագրերը:

Ստորագրման արարողությունից հետո տիկին Բիրիեն ասաց. որ CFI-ն առաջին է. որ երկու հեռուստաալիքների համագործակցությունը նոր փուլ է թեւակոխում. այն սկսվել է 1995 թ.. երբ

հեռուստաարտադրանքը հասկանալի կլինի մեր հեռուստադիտողի համար: Սա նաեւ որոշ առումով կբարձրացնի մեր հեռուստաալիքի վարկը եւ դիտողների թիվը». ասաց նա:

CFI-ի հաղորդումները Հայաստանի ազգային հեռուստաընկերությունը (ՀԱՀ) կսկսենա արտոնյալ պայմաններով: Նշելով. որ պայմանագրի կետերը կոմերցիոն գաղտնիք են. Հ.Գասպարյանը ասաց միայն. որ մեկ տարվա ընթացքում ՀԱՀ-ը ամսական մոտ 50 հազար դրամի չափով վճարումներ պետք է կատարի. դրանից հետո վճարը կբարձրանա: Առաջին տարվա ընթացքում կողմերը «հետախուզական» աշխատանքներ կկատարեն. կուսումնասիրեն հետագա համագործակցության հնա-

ԱԶԳ
Ժողովուրդ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ

Հայերն իրենց բոլը կատարեցին

Հերթը Միացյալ Նահանգներինն է

Հայտնի հրադարակագիր, ՌԱԿ Բոստոնի «Ամինիըն Միռոր Սփեբեյթըր» շաբաթաթերթի լրագրող Ֆլորանս Ավագյանը «Բոստոն գլոբ» թերթի ապրիլի 18-ի համարում գրում է, որ Ռոբերտ Քոչարյանի 59 տոկոսի հաղթանակը նախագահական արշահերթ ընտրություններում խոսք էր ուղղված ինչպես իր ժողովրդին, այնպես էլ Միացյալ Նահանգներին: Նա գրում է.

Հայ ընտրազանգվածի համար, որի 68 տոկոսը մասնակցեց ընտրություններին, դա վերջին տասը տարիների ընթացքում Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից ամբողջական շրջափակման պայմաններում գնալով վատթարացող տնտեսական եւ սոցիալական վիճակի բարելավման բուռն ցանկության արտահայտություն էր:

Քոչարյանը, որին ճանաչում են որպես չափազանց ախտասեր եւ ազնիվ տեխնոկրատի, պարտավորվել է ավելացնել օտարերկրյա ներդրումները, արդյունաբերական եւ գյուղատնտեսական արտադրանքը եւ արագացնել սեփականաշնորհման գործընթացը: Վարչապետի պաշտոնում երիտասարդ տնտեսագետի նշանակումը այդ նպատակներին է ծառայում: Նա նույնպես պարտավորվել է պայքարել կաշառակերության դեմ եւ բարեփոխումներ մտցնել ժողովրդի տնտեսական եւ սոցիալական կյանքում: Միայն Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Քոչարյանին վարչապետ նշանակելուց հետո երկրում հարուստները սկսեցին հարկեր վճարել: Իր պաշտոնադրման արարողությունից անմիջապես հետո արտասանած ճառում Քոչարյանը հայտարարեց, որ «բոլորը նախագահից սկսած մինչեւ ամենահասարակ քաղաքացին, պետք է հավասար լինեն օրենքի առաջ»:

Տնտեսական հարցի հետ սերտորեն կապված է Լեռնային Ղարաբաղի կարգավորման խնդիրը: Քոչարյանն էր, որ անփորձ պաշտոնական քաղաքներից Ղարաբաղում կազմավորեց կանոնավոր, ուժեղ մի բանակ, որը հաղթանակ տարավ ադրբեջանցիների դեմ պատերազմում:

Հայերի համար այս հակամարտությունը տխուր հուշեր է արթնացնում կապված օսմանյան թուրքերի կողմից 1915-ին իրագործված 1,5 միլիոն հայերի ցեղասպանության հետ: Միացյալ Նահանգները, Ֆրանսիան եւ Ռուսաստանը միասին աշխատելով որպես ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներ, փորձում են Լեռնային Ղարաբաղի տարածային վեճին լուծում գտնել: Բայց հայ ժողովուրդը չի ընդունում նրանց առաջարկած փուլ առ փուլ լուծումը, որը նախատեսում է առաջին հերթին գրավյալ տարածքների եւ փախստականների վերադարձ, այսինքն մի բան, որը Ղարաբաղի ժողովրդին բանակցությունների ժամանակ զրկում է հաղթաթղթից:

Քոչարյանը առաջարկել է, որ կարգավորման տարբեր այդ թվում անվտանգության երաշխիքների եւ կարգավիճակի հարցերը շաղկապվեն եւ միաստնական լուծում գտնեն:

Միացյալ Նահանգները մի կողմից հորդորելով Հայաստանի նախկին նախագահին ընդունելու փուլային տարբերակը, գիջումների դիմելու, ոչ մի ճնշում չգործադրեց Ադրբեջանի վրա: Փոխարենը անցյալ տարի Ադրբեջանի նախագահին հյուրընկալեց Վաշինգտոնում Հակառակ Կոնգրեսի եւ ամերիկահայ համայնքի բազմակի պահանջներին, նման հրավեր չուղարկվեց Տեր-Պետրոսյանին:

Ադրբեջանի նախագահ Ալիեւը դեռեւս մերժում է ճանաչել Լեռնային Ղարաբաղը որպես հակամարտության լիիրավ կողմ եւ հրաժարվում է եռակողմ (Հայաստան-Ղարաբաղ-Ադրբեջան) բանակցություններ անցկացնելուց: Ամերիկյան հաղթականությունը, որը հիմնված է մաոիստական դիվանագիտության վրա, ցարդ ձախողության է մատնվել:

Ինչպես իռլանդական խաղաղության նոր ծրագիրն է ցույց տալիս, միայն ուղղակի, անմիջական բանակցություններն են առաջնորդում կայուն խաղաղության: Եթե Միացյալ Նահանգները անկեղծորեն ցանկանում է տեւական խաղաղություն հաստատել տարածաշրջանում, պետք է հրաժարվի իր նվաքակենտրոն եւ ադրբեջանամետ դիրքորոշումից:

Առաջնահերթ հարցը չորս տարվա երերուն հրադադարն ամրապնդելն է, առանց նախապայմանների, ուղղակի, չմիջնորդված բանակցություններ անցկացնելը Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ, այնպիսի հռետորական խոսքերից ու գործնական քայլերից խուսափելը, որոնք նախանշում են Ղարաբաղի կարգավիճակը: Անհրաժեշտ է նաեւ շարունակել Ադրբեջանի դեմ կիրառվող կոնգրեսական սահմանափակումները մինչեւ շրջափակման վերացումը, եւ Սպիտակ տուն այցելելու հրավեր ուղարկել նորընտիր նախագահ Ռոբերտ Քոչարյանին հաղորդակցության նոր ուղիներ բացելու միտումով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 1998-1999 ուսումնական տարվա ընդունելությունը **մագիստրոսի կոչում** շնորհող հետեւյալ ծրագրերով՝

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ
ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համապատասխան ֆինանսավորման դեպքում, ընդունելություն կլինի նաեւ հետեւյալ ծրագրերով՝

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

Բարձրագույն կրթությունը եւ անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր են:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է **մայիսի 8-ը, ժ. 15⁰⁰**:

Տեղեկությունների համար դիմել՝
Երեւան, Մարշալ Բաղրամյան 40
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ընդունելության գրասենյակ (19)
Հեռ. 27-16-29

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան Շահվերդյան փողոցի (Չարբախ) 9 հարկանի շենքի 2 հարկում: Ընտիր նորոգում երկաթյա դուռ: Գինը պայմանագրային:
Հեռ. 77-09-68

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան (Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
մեկ-սենյականոց բն. Նորքի IV զանգվածում, հետ. **64-88-85:**

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
1981 թ. արտադրության «Սոսկվիչ 2140» մակնիշի ավտոմեքենա
Զանգահարել **45.44.56**

ALLIANCE Co. Ltd.
ԱԼԻԱՆՍ ՍՊԸ
«Ալիանս» ՍՊԸ-ն առաջարկում է
Պոլիէթիլեն (ցածր ճնշման) 1 կգ 560 դրամ
Պոլիստիրոլ (ընդ. օգտ. համար) 1 կգ 570 դրամ
Պերֆլորէթիլեն
Մեր հասցեն է. Տոթագրիչների 9, թիվ 35/36, Հեռ.՝ 52.16.00, 58.98.49, 52.93.90, ֆաքս՝ 56.51.02, կառ.՝ 68.56

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ապրիլի 30-ին, ժամը 14-ին, Գրողների միության կլոր սրահում տեղի կունենա ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «Երկփեղկ դուռ» վիպակի ննջարկումը:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿՈՐԵԼ Է
Սիրիայի հաղաթացի Գայանե Ժորժի Կարապետյանի անձնագիրը:

Ուզո՞ւմ եք նիհարել
անվնաս, առանց դիետայի եւ ֆիզկուլտուրայի:
Գրանցվեք հետեւյալ հեռախոսահամարով
52-93-53
ժամը 9-18-ը

ԿՐԵԴԻՏ-ԵՐԵՎԱՆ ԲԱՆԿ — **CREDIT-YEREVAN BANK**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկային համակարգում Հայաստանի բանկային համակարգի ինտեգրացման գործընթացի շրջանակներում «Կրեդիտ-Երեւան» բանկը սույն թվականի ապրիլի 2-ից դարձել է «EUROPAY INTERNATIONAL» եւ «MASTERCARD INTERNATIONAL» վճարային համակարգերի լիիրավ անդամ:

Առաջին անգամ հնարավորություն է ստեղծվել վերոհիշյալ համակարգերի EUROCARD, MASTERCARD, CIRRUS, edc/MAESTRO ոլաստիկ քարտերի եւ curochegue ճանապարհային չեկերի թողարկումը հայկական «Կրեդիտ-Երեւան» բանկի կողմից, որի համար հայտարավում է վերոհիշյալ քարտերի եւ չեկերի ձեւավորման մրցույթ, որոնց վրա, բացի նշված քարտերի եւ չեկերի խորհրդանիշներից, պարտադիր պետք է լինեն Հայաստանը խորհրդանշող պատկեր եւ «Կրեդիտ-Երեւան» բանկի խորհրդանիշը:

Մրցույթի համար սահմանվում են մրցանակներ՝
- առաջին մրցանակ 500 ԱՄՆ դոլար
- երկրորդ մրցանակ 300 ԱՄՆ դոլար
- երրորդ մրցանակ 100 ԱՄՆ դոլար

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար դիմել «Կրեդիտ-Երեւան» բանկի միջազգային գործառնությունների բաժին մինչեւ ս/թ. մայիսի 5-ը:
ք. Երեւան, Ամիրյան փող. 2/8, հեռ.՝ 580002

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ
Armenian Airlines

«Հայկական ավիաուղիներ ավիաընկերությունը» մայիսի 2-ից յուրաքանչյուր շաբաթ օր իրականացնելու է Երեւան-**Միլան**-Երեւան կանոնավոր չվերթը:
Տոմսերը կարող եք ձեռք բերել «Հայկական ավիաուղիներ ավիաընկերության» բոլոր գործակալություններից:
Տեղեկությունների համար զանգահարեք
58-39-69

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրաքննության թիվ 65. Դասիչ 69149. Պատուէր 811. Տպաքանակը 3500. Ստորագրված է տպագրության 29.04.1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@